Գևորգ Էմին

Ժամացույցի առջև

Դու մե~ծ ես, այո՛,
Եվ ես՝ փո~քր, այո՛.
Բայց դու նման ես այն մեծ սլաքի՛ն,
Որն իմ՝ ժամերը նշող սլաքի,
Ամեն մի քայլին հասնելու համար,
Վեց տասնյակ քա~յլ է ստիպված անում.

Նոր բան չե~մ ասում,
Ոչ էլ՝ քեզանից ինձ գերադասում,
Կամ ձգտում հատուկ դիրքի ու փառքի._
Մենք ծառայում ենք նու՛յն ժամանակին
Եվ ցույց ենք տալիս ժամանա՛կը նույն.
Ես՝ դարի ժա՛մը՝
Դու… րոպե~ն դարի.
Իսկ մնացածը՝ ինչպես ուզու~մ ես._
Մեծը դու~ կոչվիր,
Դու~ փառք վաստակիր,
Միայն, լսու՞մ ես,
Գեթ հանուն դարի՛,
Հանուն քո երդված մեծ գաղափարի՛,
Ինձ… մի՛ խանգարի: